

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆԻՑ

1993 թ. նոյեմբեր 13-ին Օդեսայում տեղի ունեցավ Սբ. Գրիգոր Լուսավորիչ հայոց եկեղեցու հիմնարկեքի հանդիսավոր արարողությունը, որը կառուցվելու է ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի նախագծով՝ օրհնությամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հիմնարկեքի սրբազան արարողությունը, հանդիսադիր Սրբազան Հոր՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանի գլխավորությամբ, կատարեցին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը, Հյուսիսային Կովկասի փոխառաջնորդ Տ. Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանը, Սբ. Էջմիածնի միաբան Տ. Միքայել վրդ. Աջապահյանը, Թեոդոսիայի հոգևոր հովիվ Տ. Երեմիա քհն. Մակիյանը, Վլադիկավկազի հոգևոր հովիվ Տ. Պետրոս քհն. Բաղրամյանը և Կրասնոդարի հայոց Սբ. Աստվածածին եկեղեցու ծիսակատար Տ. Տաթև քհն. Հարությունյանը:

Արարողությանն իրենց աղոթարար ներկայությունը բերեցին պրավոսլավ և կաթոլիկ քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Ներկա էին Օդեսայի տեղական իշխանությունների ներկայացուցիչները, Օդեսայի քաղգործկոմի նախագահի առաջին տեղակալ տիար Յուրի Ավկսենտևը, Ուկրաինայի Նախարարների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի փոխնախագահ տիար Գեորգի Շապովալը, Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար տիար Հրաչ Սիլվանյանը, Ղրիմի, Կիևի, Խարկովի, Ակկերմանի, Նիկոլաևի, Լվովի, Դոնեցկի հայ համայնքների նախագահներն ու ներկայացուցիչները, Օդեսայի ազգային համայնքների և մտավորականության ներկայացուցիչները:

16 հիմնաքարերը ջրով և գինիով լվացումից հետո, օծվեցին Սբ. Մյուռոնով՝ ձեռամբ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանի, որոնցից մեկը՝ Հայաստանից բերված տուֆ քարը, օծվեց Սբ. Գրիգոր Լուսավորչի անունով: Հուզիչ էր պահը, երբ օծվեց ևս մի փոքրիկ մասունք-քար՝ բերված Արարատ լեռից Օդեսայի լեռնագնացների ձեռքով: Քարերը հիմքի մեջ տեղադրելու ժամանակ հիմքի հողին խառնվեց Սբ. Էջմիածնից բերված Հայրենիքի կենսատու հողը:

Հիմնարկեքի կարգի ավարտից հետո Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը իր քարոզի մեջ ի մասնավորի ասաց.

«Ամբողջ հոգով գոհություն ենք մատուցում Ամենակալ Աստծուն, որ մեզ արժանացրեց այս հյուրընկալ հողի վրա հիմն արկանելու մի նոր հայոց եկեղեցու: Թող Աստված օրհնի հողն այս, որպեսզի իր բոլոր հավատավոր զավակները զորություն ու շնորհները ստանան Սբ. Հոգու, որպեսզի կարողանան կյանք ունենալ, իսկ այսօր կյանքը ծանր է բոլորի համար:

Այսօր մեզ համար կրկնակի տոն է, զի Օդեսայի պատկան իշխանությունները երջանիկ հնարավորությունը տվեցին մեզ՝ հայ ժողովրդի զավակներիս, այս հրաշագեղ անկյունում կառուցելու եկեղեցի: Հուսով եմ, որ այս տաճարը աղոթքի տուն կլինի ոչ միայն հայերիս համար, այլ այն խորհրդանիշը կդառնա ժողովուրդների բարեկամության՝ Օդեսայում ապրող բոլոր ազգերի համար: Ես ողջունում և շնորհակալություն եմ հայտնում քույր Եկեղեցիների և տեղական իշխանությունների ներկայացուցիչներին, բոլոր ներկաներին և կառուցվող եկեղեցու բարերարներին:

Տասնամյակներ առաջ մեր նախնիները անգիտաբար քանդում էին, իսկ մենք՝ ներկայիս սերունդը, Աստուծո օգնականությամբ նորից կառուցում ենք: Թող Աստված բոլորիս պարգևի հույս ու հավատ, ուժ ու եռանդ, որպեսզի հետայսու ևս մնանք արժանավոր զավակները մեր հայրենյաց»:

Այնուհետև Տ. Միքայել վրդ. Աջապահյանը, բոլոր ներկաներին ողջունելով Սբ. Էջմիածնի ողջ միաբանության անունից, ընթերցեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի և Հայրական օրհնության ուղերձը:

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՆԱԹԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Վվով

Մեծ գոհունակությամբ տեղեկացանք Ձեզանից, որ շուտով տեղի կունենա հիմնարկեքը Օդեսայի հայոց նոր եկեղեցիին:

Սուրբ Էջմիածնից հղում ենք Մեր օրհնությունը և մաղթանքը, որ առաջիկա մեկ-երկու տարիներ հետո լրանա կառուցումը նոր եկեղեցուն, որ պիտի դառնա հպարտանքը Օդեսայի հայ համայնքին:

Հղում ենք նաև Մեր սիրո ողջույնը թեմական առաջնորդ Տ. Տիրան արքեպիսկոպոսին և Ձեզ՝ մաղթելով մշտանորոգ եռանդ ու հաջողություններ:

Սուրբ Էջմիածնից օրհնություն Օդեսայի հայ հավատացյալներին:

Ողջ լերուք զորացյալ Սուրբ Հոգով:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
8 նոյեմբերի 1993 թ.

Ապա Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը, ողջույնի խոսքով դիմելով բոլոր ներկաներին, ի մասնավորի ասաց.

«Այսօր կյանքիս թերևս ամենահուզիչ և հոգեկան ուրախության պահն եմ ապրում՝ հիմնաքարը դնելով մի նոր եկեղեցու, որը հայրենիքից կտրված մեր ազգի մի բուռ զավակների համար դառնալու է միացնող կամուր-

ջը Սբ. Էջմիածնի հետ և անմար փարոսը դեպի հավիտենականություն տանող ճանապարհին: Տերն անսալով մեր աղոթքներին և տեսնելով մեր աստվածահաճո գործը, ոչ միայն մեզ արժանացրեց այս սրբազան օրվան, այլև պարգևեց արև, լույս ու ջերմություն, զի ամուր լինի հիմքը եկեղեցու, անսասան մնա մեր հավատքը և մեզ երբեք չլքի հույսը աստվածային սիրո հանդեպ:

Սրբազան Հոր ձեռքով, Հայ Առաքելական Եկեղեցու Սրբալույս Մյուռոնով օծվեցին տասնվեց անկյունաքարերը, սակայն, ինչպես տեսաք, Սուրբ Սեղանի հիմքում դրվելու համար օծվեց ևս մի փոքրիկ քար, մի մասունք, որը Օդեսայի լեռնագնացները բերել են մեր հարազատ Աստվածաշնչական Արարատ լեռից, որ խորհրդանիշն է մեր ազգի հավիտենականության և հանգրվանը նոր մարդկության օրոցքի՝ Նոյան Տապանի:

Թող մեր այս եկեղեցին, հիմնված Արարատյան օրհնության վրա, Սև ծովի այս ասպնջական ափին դառնա մի նոր Նոյան Տապան՝ իր գիրկն առնելով և շնորհներ բաշխելով Արարչի բոլոր հավատավոր զավակներին՝ անկախ ազգությունից ու դավանանքից»:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկան Ուկրաինական Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ Ալեքսանդր ավագ. քհն. Կրավչենկոն, Օդեսայի քաղգործկոմի նախագահի առաջին տեղակալ տիար Յուրի Ավկսենտևը, Ուկրաինայի Նախարարների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի փոխնախագահ տիար Գեորգի Շապովալը, Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար տիար Հրաչ Սիլվանյանը, Օդեսայի հայ համայնքի վարչության նախագահ դոկտ. Հերբերտ Քամալովը:

Սրբազան Հոր «Պահպանիչ»-ից հետո, հնչեց «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Հավարտ արարողության բոլոր հյուրերը հրավիրվեցին ընդունելության Օդեսայի Պաշտոնական Ընդունելությունների Տան սեղանատանը:

Ընդունելությունից հետո Տիրան արքեպիսկոպոսը, Նաթան վարդապետը, Միքայել վարդապետը և Օդեսայի հայ համայնքի վարչության նախագահ դոկտ. Հերբերտ Քամալովը հարցազրույց ունեցան Օդեսայի հեռուստատեսությամբ: